ԾԱՆՈՒՑՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂԻՆ

Տրամադրողի թիվ.
Ամսաթիվ.

- Դուք ստանում եք այս տեղեկատվությունը, որովհետեւ հանդիսանում եք IHSS-ի տրամադրող _____ -ի համար:
- Ստորեւ ներկայացված են IHSS-ի վերը նշված խնամք ստացողի համար արտոնված ամսական ծառայությունները: Այն ժամերը, որոնք կարող եք պահանջել ձեր ժամանակացույցի մեջ, կկրճատվեն, եթե աշխատանքը սկսեք կամ ավարտեք ամսվա կեսին:
- IHSS-ի Ծրագրի կողմից արտոնված ծառայությունները հետեւյալն են: Ստացողի պարտականությունն է ամսական արտոնված ժամերից ժամանակացույց կազմել:
- Եթե ստացողին մատակարարում է մեկից ավելի տրամադրող, ապա ստացողի պարտականությունն է ժամանակացույց կազմել յուրաքանչյուր տրամադրողի համար այնպես, որ բոլոր տրամադրողների կողմից աշխատած ժամերը չգերազանցեն ամսական արտոնված ժամաքանակը:
- Եթե կատարվել է արտոնված ժամերից ավելի աշխատանք, ապա ստացողի պարտականությունն է վճարել այդ ժամերի համար:
- Կապվեք ձեր վարչաշրջանի IHSS-ի գրասենյակի հետ, եթե ստացողը հոսպիտալացվի: Դուք չեք կարող ժամեր պահանջել այն ժամանակահատվածների համար, երբ ստացողը հոսպիտալացվել է կամ նրա մահվանից հետո:
- Ստացողի պարտականությունն է վճարել տրամադրողի վճարագրից պահված ցանկացած ծախսի մասնաբաժնի համար:
- Սոցիալական ապահովության հարկերը եւ Հաշմանդամության պետական ապահովագրությունը ինքնաբար կպահվեն ձեր վճարագրից, եթե դուք բավարարում եք պայմաններին: Որպեսզի ապահովեք պետական եւ դաշնային պահումների կատարումը, պետք է լրացնեք W-4 եւ/կամ DE-4 ձեւերը եւ ներկայացնեք այն ձեր վարչաշրջանի IHSS-ի գրասենյակ:
- Եթե ծառայություն ստացողը, որի համար դուք աշխատում եք, ձեր ծնողն է, ամուսինը/կինը կամ անչափահաս զավակը, ապա չեք կարող ընդունելի լինել Սոցիալական ապահովության կամ Medicare-ի հարկային պահումների համար:
- Եթե IHSS-ի ծառայություններ տրամադրելիս վնասվածք կրեք, ապա անմիջապես կապվեք ձեր վարչաշրջանի IHSS-ի գրասենյակի հետ:

Արտոնված	Ծառայության տեսակներ
	Տնային ծառայություններ
	Կերակրի պատրաստում
	Հետճաշյա մաքրություն
	Ընթացիկ լվացք
	Սննդի գնումներ
	Այլ գնումներ եւ ծառայություններ
	Շնչառություն
	Միզապարկի եւ աղիների խնամք
	Կերակրում
	Պարբերական անկողնային լվացումներ
	Հագցնում
	Խնամք դաշտանի ժամանակ
	Տեղաշարժում

Արտոնված	Ծառայության տեսակներ
	Տեղափոխում
	Լոգանք, բերանի խնամք եւ հարդարում
	Մարմնի մերսում եւ դիրքափոխում
	Պրոթեզի հետ կապված խնամք եւ օգնություն
	Ուղեկցում բժշկական ժամադրությունների
	Ուղեկցում այլ առնչվող հաստատություններ
	Հիմնարար մաքրություն
	Բակային վտանգների պակասեցում
	Սառույցի եւ ձյան հեռացում
	Պաշտպանական վերահսկում
	Ուսուցում եւ ցուցադրություն
	Բժշկական աջակցության ծառայություններ

***X = Արտոնված ծառայություններ, որոնց համար կարող եք վճարվել**

Եթե վերոնշյալ տեղեկատվության վերաբերյալ հարցեր ունեք կամ այլեւս չեք հանդիսանում տրամադրող, խնդրում ենք դիմել ձեր վարչաշրջանի IHSS-ի գրասենյակ՝ _____ .

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ընդհանուր տնային աշխատանքներ՝ տան մաքրությունը պահպանելու նպատակով: MPP 30-757.11

ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- Կերակրի պատրաստում. ճաշացուցակի պլանավորում, սննդամթերքի նախապատրաստում, եփում եւ ճաշերի մատուցում: MPP 30-575.131
- Հետճաշյա մաքրություն. կերակրի պատրաստման տարածքի մաքրում, կերակրի պարագաների, ամանեղենի եւ այլ իրերի լվացում, չորացում եւ հավաքում: MPP 30-757.132
- Ընթացիկ լվացք. լվացում, չորացում, հագուստի եւ սպիտակեղենի ծալում եւ դասավորում: MPP 30-575.134
- Սննդի գնումներ. մթերքների ցուցակի կազմում, այցելություն շուկա, գնումների կատարում, բեռնավորում, բեռնաթափում եւ գնված ուտելիքի պահեստավորում: MPP 30-757.135(b)
- Այլ գնումներ/ծառայություններ. ներառում է. 1) Այլ անհրաժեշտ իրերի գնումներ եւ 2) Փոքր եւ անհրաժեշտ այլ ծառայությունների կատարում, օր.՝ դեղատոմսի վերցնում: MPP 30-757.135(c)

ՈՉ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

- Շնչառության հետ կապված աջակցություն. օգնել խնամք ստացողին շնչառության հետ կապված ոչ բժշկական ծառայություններ մատուցելով, ինչպես օրինակ՝ թթվածնի սարքավորման ինքնուրույն օգտագործում եւ շնչառական սարքերի մաքրում: MPP 30-757.14(b)
- Միզապարկի եւ/կամ աղիների խնամք. օգնել խնամք ստացողին օգտվել զուգարանից (ներառյալ նստել եւ վեր կենալ), անկողնուն կից միզամանից, օստոմիայի, հոգնայի եւ/կամ կաթետերի տոպրակների դատարկում եւ մաքրում, միջադիրների, անձեռոցիկների եւ միանգամյա օգտագործման ներքնազգեստի օգտագործում, խնամք ստացողի լվացում եւ մաքրում, ձեռքերի լվացում/չորացում: MPP 30-757.14(a)
- Կերակրում. օգնել խնամք ստացողին ուտելիս, ներառյալ լվանալ նրա դեմքը եւ ձեռքերը նախքան ուտելը եւ դրանից հետո:MPP 30-757.14(c)
- Պարբերական անկողնային լվացումներ. անկողնային հիվանդի պարբերական սպունգային լոգանքներ: MPP 30-757.14(d)
- Հագցնում. օրվա ընթացքում աջակցել խնամք ստացողին հագնել եւ հանել իր հագուստները, երբ դա անհրաժեշտ լինի: MPP 30-757.14(f)
- Խնամք դաշտանի ժամանակ. օգնություն սանիտարական միջադիրների եւ անձեռոցիկների արտաքին տեղադրման ժամանակ: MPP 30-757.14(j)
- Օգնություն տեղաշարժմանը եւ մեքենա նստելիս/դուրս գալիս. օգնել խնամք ստացողին քայլել եւ տեղաշարժվել տան մեջ, ներառյալ ուղեկցել դեպի լոգասենյակ, օգնել մեքենա նստելիս եւ դուրս գալիս՝ բժշկական այցերի կատարման եւ/կամ այլ առնչվող վայրեր հաճախելու նպատակով: MPP 30-757.14(k)
- Օգնություն տեղափոխում կատարելիս (անկողնում/նստաթոռին պառկելիս/նստելիս եւ վեր կենալիս). օգնել խնամք ստացողին կանգնած, նստած կամ պառկած դիրքից անցել այլ դիրքի, ինչպես նաեւ մի կահույքի կամ հարմարանքի օգտագործումից անցնել մյուսին: MPP 30-757.14(h)
- Լոգանք, բերանի խոռոչի խնամք եւ/կամ հարդարում. օգնել խնամք ստացողին լոգանք կամ ցնցուղ ընդունել, մաքրել ատամները խոզանակի եւ թելի օգնությամբ, մաքրել ատամնային պրոթեզները, լվանալ, չորացնել եւ սանրել մազերը, սափրվել եւ օգտագործել լոսյոն, փոշի եւ անուշահոտ: MPP 30-757.14(e)
- Մարմնի մերսում եւ դիրքափոխում. մարմնի մերսում արյան շրջանառությունը լավացնելու եւ/կամ մաշկի վիճակի վատթարացումը կանխելու նպատակով, դիրքափոխում անկողնու մեջ եւ այլ տիպի տեղաշարժումներ, ինչպես նաեւ շարժման հետ կապված այլ վարժությունների վերահսկում: MPP 30-757.14(g)
- Խնամք/օգնություն պրոթեզը եւ դեղամիջոցներն օգտագործելիս. պրոթեզային հարմարանքների, ներառյալ տեսողության/ լսողության սարքերի տեղադրում եւ հանում, խնամք եւ մաքրում, հիշեցում խնամք ստացողին ընդունել նշանակված եւ դեղատնից գնված դեղորայքը եւ դեղարկղիկի պահպանում: MPP 30-757.14(i)

ՈՒՂԵԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ուղեկցել խնամք ստացողին՝ գնալ անհրաժեշտ ժամադրությունների առողջապահության հետ կապված հիմնարկներ եւ/կամ այլ առնչվող հաստատություններ եւ ետ վերադառնալ:

ՀԻՄՆԱՐԱՐ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ. Տան հիմնարար մաքրություն՝ վտանգավոր աղբի եւ մնացորդների հեռացման նատակով: Արտոնվում է միայն մեկ անգամ եւ որոշակի հանգամանքների դեպքում: MPP 30-757.12

ԲԱԿԱՅԻՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՊԱԿԱՍԵՑՈՒՄ. Թեթեւ բակային աշխատանքներ. 1) Բարձր խոտի կամ մոլախոտերի եւ աղբի հեռացում, երբ դրանք հրդեհի վտանգ են ներկայացնում (արտոնվում է միայն մեկ անգամ) կամ 2) Սառույցի, ձյան կամ այլ վտանգավոր նյութերի հեռացում մուտքերից եւ քայլելու հիմնական ուղիներից, այն դեպքում երբ դրանք վտանգավոր են դարձնում մուտքը դեպի տուն: MPP 30757.16

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. Ինքնուրույն չկառավարվող, շփոթվածության մեջ գտնվող եւ մտավոր խանգարում ունեցող կամ մտավոր հիվանդ անձի վարքի հսկում եւ անհրաժեշտության դեպքում պաշտպանության վնասվածքներից, վտանգից կամ պատահարներից: Առկա են որոշ սահմանափակումներ: MPP 30-757.17

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Ուսուցման եւ ցուցադրության ծառայություններ IHSS-ի տրամադրողի կողմից, որպեսզի օգնություն ցուցաբերվի խնամք ստացողին՝ կատարել նույն գործողությունները ինքնուրույն: Առկա են որոշ սահմանափակումներ: MPP 30-757-18

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Հետեւյալ պայմանները բավարարող ծառայություններ. 1) Գործողություններ, որոնք խնամք ստացողները սովորաբար կարող էին կատարել ինքնուրույն, եթե չունենային ֆունկցիոնալ սահմանափակումներ, 2) Գործողություններ, որոնք անհրաժեշտ են ելնելով ստացողի ֆիզիկական կամ մտավոր առողջական վիճակից, որպեսզի պահպանվի վերջինիս առողջությունը, 3) Գործողություններ, որոնք ներառում են դեղերի օգտագործում, մաշկի ծակում, մարմնի որեւէ բացվածքից բժշկական սարքավորման ներդրում, ստերիլ պրոցեդուրաներ պահանջող գործողություններ կամ գործողություններ, որոնք պահանջում են որոշման կայացում արտոնագրված բուժաշխատողի կողմից՝ հիմնված իր ստացած կրթության վրա: Առկա են որոշ սահմանափակումներ: MPP 30-757.19

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՎԵԼԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԵՂԵԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ՆԱՅԵԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՌՆԱՐԿԻ (MPP) ՎԵՐԸ ՆՇՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ CDSS-Ի ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՅՔՈՒՄ՝ http://www.dss.cahwnet.gov/ord/PG310.htm ԿԱՄ ՁԵՐ ՎԱՐՉԱԾՐՋԱՆԻ IHSS-Ի ՏԵՂԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ: